ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանի և ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Գրիգոր Մինասյանի՝ Խորվաթիայի Հանրապետություն (Զագրեբ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձինք՝ Կարեն Անդրեասյան և Գրիգոր Մինասյան:

Գործուղված անձանց զբաղեցրած պաշտոնները՝ ՀՀ արդարադատության նախարար, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Խորվաթիայի Հանրապետություն (Զագրեբ), 2022թ. սեպտեմբերի 2-ից 6-ը:

Հրավիրող կողմը՝ Խորվաթիայի Հանրապետության արդարադատության նախարար Իվան Մալենիցա:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն «Էլեկտրոնային արդարադատություն և արդարադատության ոլորտի հետ կապված պետական ծառայությունների մատուցման հարցեր» թեմայով, ինչպես նաև Խորվաթիայի Հանրապետության արդարադատության և հանրային կառավարման նախարար Իվան Մալենիցայի և այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպումներին:

Քննարկված թեմաները՝ Էլեկտրոնային արդարադատության, հանրային ծառայությունների մատուցման ոլորտում, դատական և իրավական, հակակոռուպցիոն, ինչպես նաև քրեական արդարադատության բնագավառներում, վեճերի այլընտրանքային լուծումների առնչությամբ Հայաստանում ընթացքի մեջ գտնվող բարեփոխումները և երկուստեք հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ այլ հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանը և ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Գրիգոր Մինասյանը «Էլեկտրոնային

արդարադատություն և արդարադատության ոլորտի հետ կապված պետական ծառայությունների մատուցման հարցեր» թեմայով, ինչպես նաև Խորվաթիայի Հանրապետության արդարադատության և հանրային կառավարման նախարար Իվան Մալենիցայի և այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպումներին մասնակցելու նպատակով 2022թ. սեպտեմբերի 2-ից 6-ը գտնվել են Խորվաթիայի Հանրապետությունում (Զագրեբ):

Զագրեբ այցի ընթացքում ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանը հանդիպել է Իվան Մալենիցայի հետ: Հանդիպման ընթացքում երկու երկրների արդարադատության նախարարները քննարկել են էլեկտրոնային արդարադատության, հանրային ծառայությունների մատուցման ոլորտում, դատական և իրավական, հակակոռուպցիոն, ինչպես նաև քրեական արդարադատության բնագավառներում, վեճերի այլընտրանքային լուծումների առնչությամբ Հայաստանում ընթացքի մեջ գտնվող բարեփոխումները և երկուստեք հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ այլ հարցեր: Խորվաթիայի Հանրապետության արդարադատության և հանրային կառավարման նախարարը ներկայացրել է էլեկտրոնային արդարադատության և հանրային ծառայությունների թվայնացման ոլորտում Խորվաթիայի Հանրապետության ձեռքբերումները, կոռուպցիայի դեմ պայքարի և դատահիրավական ոլորտներում կատարված բարեփոխումները: Երկու գործընկերները պայմանավորվածություն են ձեռք բերել շարունակել համագործակցությունը և փորձի փոխանակումը հետաքրքրական ոլորտներում:

Աշխատանքային այցի ընթացքում ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանը և ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Գրիգոր Մինասյանը այցելել են Զագրեբի Մունիցիպալ քաղաքացիական դատարան և Խորվաթիայի Հանրապետության արդարադատության և հանրային կառավարման նախարարություն, որտեղ քննարկումներ են ունեցել արդարադատության ու հանրային կառավարման ոլորտների թվայնացման համար պատասխանատու գործակալության, Դատական դեպարտամենտի, Եվրոպայի հետ

հարաբերությունների և միջազգային համագործակցության դեպարտամենտի, կոռուպցիայի կանխարգելման ստորաբաժանման, Քրեակատարողական համակարգի և պրոբացիայի ոլորտների ներկայացուցիչների հետ: Նշված քննարկումների շրջանակում կողմերը ներկայացրել են երկուստեք ձեռքբերումները և բարեփոխումների հիմնական ուղղությունները, ինչպես նաև՝ պայմանավորվածություններ ձեռք բերել համագործակցության հետագա շարունակականության ապահովման և ընդլայնման ուղղությամբ:

ՀՀ արդարադատության նախարարը և ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը հանդիպել են նաև Խորվաթիայի Հանրապետության քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Գրիգոր Մինասյանը ներկայացրել է իր համակարգման ներքո գտնվող ՀՀ կառավարության կողմից 2022թ. հուլիսի 21-ին հաստատված Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը:

Հարկ է նաև նշել, որ ՀՀ արդարադատության նախարար կարեն Անդրեասյանի և Խորվաթիայի Հանրապետության արդարադատության նախարար Իվան Մալենիցայի միջև համագործակցությունը սկիզբ է առել ԵԽ նախարարների կոմիտեում Իտալիայի նախագահության շրջանակներում 2021թ. դեկտեմբերի 12-ից 14-ը Իտալիայի Հանրապետություն (Վենետիկ) կայացած «Հանցավորություն և քրեական արդարադատություն. վերականգնողական արդարադատության դերը Եվրոպայում» թեմայով ԵԽ անդամ պետությունների արդարադատության նախարարների խորհրդաժողովի շրջանակներում երկու գործընկերների միջև կայացած հանդիպումից:

ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանի և ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Գրիգոր Մինասյանի՝ Զագրեբ կատարած այցը կարևորվում է այն համատեքստում, որ այն կնպաստի Հայաստանի

Հանրապետության և Խորվաթիայի Հանրապետության միջև իրավական ոլորտում առկա համագործակցության խորացմանն ու զարգացմանը:

ՀՀ արդարադատության նախարար

Recoverable Signature

X

Karen Andreasyan

Signed by: ANDREASYAN KAREN 2009770196

Կարեն Անդրեասյան

07.09.2022թ.